Արձանագրություն N 3
ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/10 ծածկագրով ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 08.11.2019թ.
ժամը 12:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Անտոնյան
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Մեսրոպյան
Լ. Խալաթովա
Ք. Աբրահամյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

Բացակայում էր՝
Հանձնաժողովի անդամ՝ Գ. Խաչատրյան

1. ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Կ. Անտոնյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի նոյեմբերի 5-ին, ժամը 11:30-ին:

բ) Գնման գործընթացն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

գ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 10 000 000 (տաս միլիոն) ՀՀ դրամ:

դ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ	5 950 000	1 190 000	7 140 000
2	<<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ	13 700 000	2 740 000	16 440 000
3	<<ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ>> ՍՊԸ	15 000 000	-	15 000 000
4	<<Հայաուդիտ>> ՍՊԸ	17 500 000	3 500 000	21 000 000

ե) Ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է 05.11.2019թ. նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

1.2 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ

նթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է 2019 թվականի նոյեմբերի 6-ի նիստը և ծանուցել բավարար գնահատված վերը նշված կազմակերպություններին 2019 թվականի նոյեմբերի 8-ին ժամը 12:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ) գների նվազեցման շուրջ բանակցություններին մասնակցելու մասին:

- Հրավիրված բանակցություններին չի ներկայացել <<ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ>> ՍՊԸ-ն:
- Բանակցություններին ներկա մասնակիցներից՝ <<ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ-ի կողմից նոր գնային առաջարկ չի ներկայացվել, իսկ <<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ-ի և <<Հայաուդիտ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հետևյալ նոր գնային առաջարկները՝

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	<<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ	4 500 000	900 000	5 400 000
2	<<Հայաուդիտ>> ՍՊԸ	12 700 000	2 540 000	15 240 000

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մասին

(Կ. Անտոնյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը, հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

Մրցույթում զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ	բավարար
2	<<ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ	բավարար
-	<<Հայաուդիտ>> ՍՊԸ	անբավարար
-	<<ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ>> ՍՊԸ	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Կ. Անտոնյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշում է.

ա) ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից

վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

բ) Ծանուցել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Կ. Անտոնյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Կ. Անտոնյան

Անդամ՝ ---------- Գ. Մեսրոպյան

---------- Լ. Խալաթովա

---------- Ք. Աբրահամյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան